

ծով: Հրէան ալ դո՛՛հ էր, որ այդ շահաւոր սապարէզին մէջ ոեւէ մրցակից չունէր: Եւ արդէն չէ՞ որ Թարմուտը կ'արգելէր իրեն «օտար հող մշակել»: Ի՞նչ կար աւելի դիւրատար դանձ, քան ոսկին, զոր կարելի էր անմիջապէս փախցընել հաղածանքներու կամ կոտորածներու ժամանակ: Մէկ օրէն միւսը Մեսիան կրնար յայտնուիլ եւ Թարայէլն, իբր Աստուծոյ ընտրեալը պէտք է միջոցներ ունենար միւս ազգերուն իշխելու: Ի՞նչ միջոց կար աւելի զօրաւոր քան ոսկին, որու առջեւ այն ատեններն ալ ամենապէս զլուխներն իսկ կը խոնարհէին, ինչպէս այսօր:

Այս արհեստն ալ, կեբքոյի բնակութեան նման, նախապէս կամաւոր էր, բայց յետոյ հարկադրուեցաւ անոնց. իրաւունք չունէին արհեստակցական միութիւններու մասնակցելու, հողատէր գառնալու կամ զինուորական ծառայութեան մէջ դիւրք գրաւելու, որով ըստիպուած էին դրամի առուտուրով զբաղելու:

Իրամախիսութիւնն ու սեղանաւորութիւնն ալ զօրաւոր պատճառներ եղած են հակահրէական պղպայտմներ արտադրելու: Շայլօքը կը գրգռէր ինչպէս իշխաններու եւ կրօնականներու, նոյնպէս եւ աղքատներու զայլոյթը: Իշխանները կը փախաբէին անոնց հարատուութեան տիրանալ, քաղքենիները կ'առաջէին անոնց մրցակցութիւնը, իսկ աղքատներն ալ զանոնք պատճառ կը նկատէին իրենց թըռուառութեանց:

Եկեղեցիի հալածանքներն հրէաներու դէմ պատճառ ունեցած են իրապէս զանոնք բռնութեամբ քրիստոնեայ դարձնելը, բայց իրաւամբ ըստւած է թէ ոչ թէ ի հեճուկս հալածանքներու, այլ հալածանքներու պատճառաւ է որ փոքր ազգերը կրցած են իրենց ազգային ինքնութիւնը պահպանել: —

Հայերն Ռումանիա դադթած են ԺԲ դարէն սկսեալ, եւ մինչեւ 1850 թուականը, այսինքն՝ մօտ 700 տարի պահած են իրենց ազգութիւնը, լեզուն ու կրօնը: Բայց երբ ԺԹ դարուն դադրած են հալածանքները եւ խմբովին ռումանական հպատակ նկատուած են տեղացիներու հետ համազօր իրաւունքներով, կորուսած են ամէն ինչ եւ եթէ 1895-ի նոր ներգաղթը տեղի չունենար, հին գաղութը բոլորովին պի-

տի կորսուէր, Գալլիցիոյ կամ Լեհաստանի գաղութներուն յար եւ նման:

Այդ հալածանքներու պատճառաւ Սպանիոյ մէջ ըլլայ թէ Ֆրանսայի, Գերմանիոյ կամ Հելլադայի, հակառակ միջավայրի, կլիմայի, տիրող բարքերու եւ սովորութեանց տարբերութիւններուն, հրէան ամենուրեք կը մնար միեւնոյնը, կ'աղբէր միեւնոյն ընկերային կեանքը եւ կը զբաղէր միեւնոյն արհեստով:

Այսարհի բոլոր կեթթօներն իրարու կը նմանէին եւ պանդուխտ հրէան անոր աւելի ջերմօրէն փարած էր քան Երուսաղէմին:

Կէթթօի Կեանքը

Ի՞նչպէս կ'աղբէին հրէաներն այդ կէթթօներուն մէջ: Պարոյի, արտաքսման, ջարդի եւ չարչարանքներու մղձաւանջին տակ յաւիտեանական տաղնապ մը, ողբերգութիւն մը կ'աղբէր հրէայ ժողովուրդը, քրիստոնէին սուրնթեր: Լենկթիմուրի, Շահ Աբրաքսին, Ենիչէրիներու եւ սուլթան Համիտի օրեր, որոնք ոչ թէ քանի մը տասնեակ, այլ հարիւրաւոր տարիներ տեսած են. ամէն վայրկեան վըտանդի եւ մահուան սարսուռ. շատեր տեղի տուած են չարչարանքներուն եւ քրիստոնէութիւն ընդունած են ճնշման տակ: Այդ բոնի քրիստոնէացածներու զաւակներն հրէայ ցեղին համար եղած են աւելի վտանգաւոր քան նոյնինքն քրիստոնեաները. անոնք են որ մատնանշած են Թալմուտի այն հատուածներն, որոնք կրնային աւելի գրգռել քրիստոնեայ եկեղեցականներու ատելութիւնը: Անոնց ցուցմունքներով է որ Թարմուտը այնչափ անգամներ արգիլուած ու այրուած է:

Կային նաեւ հրէական ներքին վէճերն ու երկպառակութիւնները Թարմուտի այլեւայլ մեկնարանութեանց պատճառաւ: Կար ազատամիտ հատուած մը, որ կ'ուզէր ձերբազատել ժողովուրդը Թարմուտի սեղմիչ ճիրաններէն եւ կար մոլեռանդ զանդուածը, որուն համար սրբապղծութիւն էր ամէն նորութիւն: Այդ միսթիք պաշտամունքին մէջ է որ հալածական հրէան կը գտնէր իր մխիթարութիւնը, երբ երեկոյին յողնարեկ տուն կը վերադառնար քրիստոնէի անհանդուրժելի դրացիներէնէն զղուած ու զայրացած: Այստեղ էր որ